

«Վավերացնում եմ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ
25 սեպտեմբերի 2002 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2002 թվականի N 1473-Ն

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 29-ի «Ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու կարգը սահմանելու մասին» N 667 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2002 թ. սեպտեմբերի 18
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2002 թվականի
օգոստոսի 29-ի N 1473-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ

1. Մույն կարգով սահմանվում է ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի (այսուհետ՝ նախագծային փաստաթղթեր) մշակման համար կառուցապատողին ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու կարգը, այդ թվում՝ քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման համակարգի (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ) կիրառման միջոցով:

(1-ին կետը լրաց. 29.12.05 N 2405-Ն, 12.04.12 N 521-Ն)

2. Ճարտարապետահատակագծային առաջադրանքը (այսուհետ՝ առաջադրանք) փաստաթուղթ է, որը Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով, տարածական պլանավորման փաստաթղթերով, բնակավայրի քաղաքաշինական կանոնադրությամբ, ինչպես նաև քաղաքաշինական, պատմամշակութային ժառանգության, բնապահպանական, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային, հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության և այլ նորմատիվ պահանջներին համապատասխան սահմանում է տվյալ տարածքում քաղաքաշինական գործունեության օբյեկտի նախագծային փաստաթղթերի մշակման պարտադիր պայմաններ, պահանջներ ու սահմանափակումներ:

(2-րդ կետը խմբ. 29.12.05 N 2405-Ն)

2¹. Առաջադրանքով սահմանված պայմանները հիմք են հանդիսանում նախագծային փաստաթղթերի մշակման համար և պարտադիր են քաղաքաշինական գործունեության բոլոր մասնակիցների համար:

(2¹-ին կետը լրաց. 29.12.05 N 2405-Ն)

3. Համայնքի վարչական սահմաններում առաջադրանքը կառուցապատողին տալիս է համայնքի ղեկավարը, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

(3-րդ կետը խմբ. 29.12.05 N 2405-Ն, 09.04.09 N 354-Ն, փոփ. 03.03.11 N 257-Ն)

3¹. (կեսն ուժը կորցրել է 09.04.09 N 354-Ն)

4. Առաջադրանքը ներառում է սույն կարգի 2-րդ կետով սահմանված կառուցապատման առնչվող պահանջներն ու սահմանափակումները, նախագծային փաստաթղթերի մշակման փուլերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին» N 812 որոշմամբ սահմանված կարգի, անհրաժեշտ ելակետային տվյալներն ու քաղաքաշինական օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների (ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում և այլն) նախագծման տեխնիկական պայմանները (այսուհետ՝ տեխնիկական պայմաններ), ինչպես նաև առաջադրանքի գործողության ժամկետը, որը չի կարող գերազանցել 2 տարին (N 2 ձև):

Նոր կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերի առաջադրանքը պարտադիր պահանջ է ներառում նաև փոստային բաժանորդային պահարանների տեղադրման վերաբերյալ՝ «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

(4-րդ կետը խմբ. 29.12.05 N 2405-Ն, փոփ., լրաց. 03.03.11 N 257-Ն)

4.1. Առաջադրանքի անբաժանելի մասը կազմող տեխնիկական պայմանները տրվում են ինժեներական սպասարկում իրականացնող ծառայությունների կողմից (այսուհետ՝ ծառայություններ)՝ առաջադրանք տրամադրող սույն կարգի 3-րդ կետում նշված առաջադրանք տրամադրող մարմնին (այսուհետ՝ իրավասու մարմին)՝ վերջինիս հարցման (այդ թվում՝ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով) հիման վրա:

(4.1-ին կետը լրաց. 03.03.11 N 257-Ն, փոփ., լրաց. 12.04.12 N 521-Ն)

4.2. Մույն կարգի 16-րդ կետով սահմանված դեպքերում կառուցապատողի հայտի ընդունման օրվանից եռօրյա ժամկետում իրավասու մարմինը հարցում է ներկայացնում համապատասխան ծառայություններ՝ տեխնիկական պայմաններն ստանալու համար,

կցելով սույն կարգի 18-րդ կետով սահմանված փաստաթղթերը (Էլեկտրոնային հաղորդակցության միջոցների կիրառման դեպքում՝ փաստաթղթերի տեսաներաձված օրինակները):

(4.2-րդ կետը լրաց. 03.03.11 N 257-Ն, փոփ., լրաց. 12.04.12 N 521-Ն)

4.3. Սույն կարգի 12-րդ կետով նախատեսված դեպքերում առաջադրանքի ձևավորման փուլում՝ համապատասխան ծառայությունների կողմից տեխնիկական պայմանները տրամադրվում են իրավասու մարմնի հարցումն ստանալու օրվանից՝ սույն կարգի 4.4-րդ կետով սահմանված կարգով և ժամկետներում:

(4.3-րդ կետը լրաց. 03.03.11 N 257-Ն)

4.4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների համար համապատասխան ծառայությունների կողմից տեխնիկական պայմաններն իրավասու մարմնին են տրամադրվում վերջինիս հարցումն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում, III կատեգորիայի օբյեկտների համար՝ 10-օրյա, իսկ IV և V կատեգորիաների օբյեկտների համար՝ 15-օրյա ժամկետում:

(4.4-րդ կետը լրաց. 03.03.11 N 257-Ն)

4.5. Հաստատված բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կիրառման դեպքում իրավասու մարմինն առաջադրանքի փոխարեն կառուցապատողին է տրամադրում ընտրված օբյեկտի տեղանշման հատակագիծը և անհրաժեշտ տեխնիկական պայմանները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

(4.5-րդ կետը լրաց. 12.04.12 N 521-Ն)

4.6. Սույն կարգի 4-րդ կետում նշված ելակետային տվյալներն ու տեխնիկական պայմանները՝ N 2 ձևում աստղանիշով (*) նշված դրույթների մասով տրամադրվում են նաև վերջիններիս գրաֆիկական արտացոլումն ամրագրող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500:

(4.6-րդ կետը լրաց. 02.05.13 N 522-Ն)

4.7. Էլեկտրոնային հաղորդակցության (ներառյալ ամրակցված հեռախոսացանցը) ենթակառուցվածքների ելակետային տվյալների մասով ամփոփ սխեմայում նշվում են N 2 ձևի՝

1) «Նախագծվող հողամասի բնութագիրը» բաժնի 5-րդ կետով սահմանված՝ գոյություն ունեցող Էլեկտրոնային հաղորդակցության ստորգետնյա համակարգերի մասին տեղեկատվությունը՝ դրանց կառուցման համար տրված շինարարության թույլտվությունը համապատասխան.

2) «Նախագծային պահանջներ» բաժնի 12.4-րդ կետով սահմանված Էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը)՝ մինչև կառուցապատվող հողամասի սահմանագիծը հատվածի տեղադիրքը, որը պետք է ապահովի՝

ա. հանրային Էլեկտրոնային հաղորդակցության տարբեր օպերատորների կողմից դրա համատեղ օգտագործման հնարավորությունը՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան,

բ. կառուցապատողի կողմից շինարարական աշխատանքների կատարման նվազագույն ծավալը,

գ. գոյություն ունեցող ստորգետնյա մալուխատարների օգտագործման հնարավորությունը,

դ. համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով (առկայության դեպքում) ինժեներական ցանցերի, սարքավորումների, ինչպես նաև ստորգետնյա տարածքների օգտագործման գոտիների համար ընդունված լուծումներին համապատասխանությունը:

(4.7-րդ կետը լրաց. 02.05.13 N 522-Ն)

4.8. Կառուցապատվող հողամասի սահմաններում առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման անհրաժեշտության դեպքում ճարտարապետահատակագծային առաջադրանքի «Լրացուցիչ պայմաններ» բաժնի 25-րդ կետում կատարվում է համապատասխան գրառում:

(4.8-րդ կետը լրաց. 02.05.13 N 522-Ն)

4.9. Կառուցապատողն առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման պայմանների վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերում տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ՝ մինչև նախագծային աշխատանքներն սկսելը:

(4.9-րդ կետը լրաց. 02.05.13 N 522-Ն)

5. Առաջադրանքը չի կարող ներառել նախագծվող օբյեկտի գեղարվեստական արտահայտչամիջոցների վերաբերյալ պարտադիր պայմաններ, եթե դրանք չեն բխում միասնական քաղաքաշինական համալիրի ձևավորման պահանջներից կամ հիմնավորված չեն կազմավորված քաղաքաշինական, պատմամշակութային կամ բնական միջավայրի բնույթը պահպանելու անհրաժեշտությամբ:

6. Սույն կարգի 4-րդ կետով նախատեսված ժամկետը լրանալու դեպքում առաջադրանքի գործողությունը համարվում է դադարեցված, ընդ որում, կատարված ծախսերի ռիսկը կրում է կառուցապատողը:

(6-րդ կետը խմբ. 29.12.05 N 2405-Ն)

7. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման դեպքում առաջադրանքով սահմանված պայմանները պահպանվում են լրիվ ծավալով:

(7-րդ կետը խմբ. 29.12.05 N 2405-Ն)

8. Այն դեպքերում, երբ կառուցապատվող հողամասի ճարտարագիտական (ճարտարագիտաերկրաբանական) ուսումնասիրություններն անհնարին են առանց քանդման աշխատանքների իրականացման, ապա սեփականատիրոջը տրված առաջադրանքի հետ միասին տրվում է քանդման թույլտվություն:

Օբյեկտի փաստացի քանդումն իրականացվում է առաջադրանքով սահմանված հաջորդականությամբ և կարգով՝ օրենքով սահմանված տեղական տուրքը կառուցապատողի կողմից վճարվելուց հետո:

(8-րդ կետը խմբ. 29.12.05 N 2405-Ն)

9. (կեսն ուժը կորցրել է 09.04.09 N 354-Ն)

10. Առաջադրանքով սահմանված ճարտարապետահատակագծային պահանջները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» N 408 որոշմամբ սահմանված կարգով մշակված և հաստատված գոտևորման նախագծերով տվյալ գոտու թույլատրելի օգտագործմանը (կառուցապատմանը):

(10-րդ կետը խմբ. 29.12.05 N 2405-Ն)

11. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V կատեգորիաների դասակարգում ունեցող օբյեկտների ու համալիրների առաջադրանքները կարող են լրամշակվել իրավասու մարմնի կողմից միջանկյալ համաձայնեցում ստացած՝ սահմանված կարգով մշակված էսքիզային նախագծի հիման վրա, եթե նման պայման ամրագրված է առաջադրանքում:

(պարբերությունն ուժը կորցրել է 09.04.09 N 354-Ն)

(11-րդ կետը խմբ. 29.12.05 N 2405-Ն, փոփ. 03.03.11 N 257-Ն)

12. Քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերն օտարելու կամ օգտագործման (այդ թվում՝ վարձակալության) տրամադրելու դեպքում առաջադրանքը տրվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված համապատասխան ընթացակարգերի համար նախատեսված փաստաթղթերի հետ միասին, ընդ որում՝

ա) աճուրդային կարգով հողամասերն օտարելու դեպքում՝ աճուրդի կազմակերպման փաստաթղթերի փաթեթում.

բ) մրցույթով վարձակալության տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում.

գ) առանց մրցույթի անհատույց (մշտական) օգտագործման, ուղղակի վաճառքի միջոցով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված այլ դեպքերում՝ հողամասը կառուցապատման նպատակով տրամադրելու մասին որոշման հետ միասին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասը հատկացնելու մասին որոշման հետ միասին:

(12-րդ կետը խմբ. 29.12.05 N 2405-Ն, փոփ. 03.03.11 N 257-Ն)

12.1. Առաջադրանքը և դրա անբաժանելի մասը հանդիսացող տեխնիկական պայմանները կառուցապատողին տրամադրվում են անվճար:

(12.1-ին կետը լրաց. 03.03.11 N 257-Ն)

13. Մույն կարգի 12-րդ կետով նախատեսված դեպքերում առաջադրանքի ելակետային և չափագրական նյութերի նախապատրաստման հետ կապված ծախսերը սահմանված կարգով և չափով ներառվում են աճուրդի կամ մրցույթի կազմակերպման ծախսերում կամ սահմանվում են «զ» ենթակետով նշված որոշմամբ:

(13-րդ կետը խմբ. 03.03.11 N 257-Ն)

14. (կետն ուժը կորցրել է 03.03.11 N 257-Ն)

15. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի «Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը սահմանելու մասին» N 479 որոշմամբ սահմանված կարգով իրականացվող հողօգտագործումների վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են առաջադրանքի նախագծի հետ միասին:

16. Անշարժ գույքի (հողամաս, շենքեր ու շինություններ) սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավասությամբ օժտված օգտագործողը քաղաքաշինական գործունեություն իրականացնելու, այդ թվում՝ շենքերի ու շինությունների կամ դրանց մի հատվածի (այսուհետ՝ կառույց) գործառական նշանակությունը փոփոխելու նպատակով առաջադրանք ստանալու համար իրավասու մարմին է ներկայացնում հայտ (N 1 ձև), եթե նախատեսվող աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N 91 որոշմամբ սահմանված կարգով պահանջվում է շինարարության թույլտվություն: Ընդ որում, եթե կառույցի գործառական նշանակության նախատեսվող փոփոխությունը հանգեցնում է հողամասի գործառական կամ նպատակային նշանակության փոփոխության, ապա կառույցի գործառական նշանակության փոփոխությանն առնչվող առաջադրանքի նախագիծն ուժի մեջ է մտնում հողամասի նպատակային կամ գործառական նշանակությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոփոխելուց հետո:

(16-րդ կետը խմբ. 29.12.05 N 2405-Ն)

16¹. Եթե կառույցի գործառական նշանակության փոփոխության համար չի պահանջվում շինարարության թույլտվություն (հետևաբար նաև առաջադրանք), ընդ որում՝

ա) անհրաժեշտություն է առաջանում փոփոխել հողամասի գործառական կամ նպատակային նշանակությունը, ապա կառույցի գործառական նշանակության փոփոխության մասին իրավասու մարմնի որոշումն ընդունվում է հողամասի նպատակային կամ գործառական նշանակության փոփոխումից հետո՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

բ) անհրաժեշտություն չի առաջանում փոփոխել հողամասի գործառական կամ նպատակային նշանակությունը, ապա կառույցի գործառական նշանակության փոփոխության մասին իրավասու մարմնի որոշումն ընդունվում է՝ հիմք ընդունելով սույն կարգի 2-րդ կետով նշված պարտադիր պայմանները, պահանջներն ու սահմանափակումները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» N 88 որոշմամբ սահմանված կարգով:

(16-ին կետը լրաց. 29.12.05 N 2405-Ն)

16². Մույն կարգի 16.1-ին կետի «բ» ենթակետի պահանջները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» N 88 որոշմամբ հաստատված կարգի 3.1-ին և 3.2-րդ կետերով նախատեսված դեպքերի վրա:

(16-րդ կետը լրաց. 19.04.12 N 542-Ն)

17. Հայտում նշվում են նախագծվող օբյեկտի հասցեն, նշանակությունը, նախատեսվող մակերեսը, հարկերի թիվը կամ շենքի և շինության վերափոխման, վերակառուցման, ամրակայման, վերանորոգման, վերականգնման գործառական նշանակության փոփոխման նպատակը և կառուցապատողի ցանկությամբ՝ օբյեկտի վերաբերյալ այլ լրացուցիչ տվյալներ:

(17-րդ կետը լրաց. 03.03.11 N 257-Ն)

18. Հայտին կցվում են՝

ա) կառուցապատողի հողամասի հատակագիծը՝ նախագծվող (վերակառուցվող, ուժեղացվող, վերականգնվող, փոփոխվող և այլն) օբյեկտի առաջարկվող տեղանշմամբ, իսկ կառույցի գործառական նշանակության փոփոխության դեպքում՝ նաև վերջինիս հատակագիծը (հատակագծերը)։

բ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ օգտագործողի՝ անշարժ գույքը փոփոխելու իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը:

(18-րդ կետը խմբ. 29.12.05 N 2405-Ն)

18.1. Էլեկտրոնային համակարգի միջոցով առաջադրանք ստանալու համար կառուցապատողը գրանցվում է իրավասու մարմնի Էլեկտրոնային ընդունարանի վեբ-կայքում՝ նշելով իր Էլեկտրոնային հասցեն ու հեռախոսահամարը, ստանում գրանցման համար և սույն կարգի 16-րդ կետի համաձայն իրավասու մարմին է ներկայացնում Էլեկտրոնային ձևաթղթով լրացված (N 1 ձև) հայտ՝ նշելով սույն կարգի 17-րդ կետում նշված օբյեկտի մասին անհրաժեշտ տվյալները: Հայտին կից ներկայացվում են սույն կարգի 18-րդ կետում նշված փաստաթղթերի տեսաներածված օրինակները:

(18.1-ին կետը լրաց. 12.04.12 N 521-Ն)

18.2. Գրանցման համարը կառուցապատողի համար նաև հայտի շարժի մասին տեղեկություններ ստանալու միջոց է:

(18.2-րդ կետը լրաց. 12.04.12 N 521-Ն)

18.3. Էլեկտրոնային համակարգի միջոցով առաջադրանքի ստացման գործընթացն իրականացվում է կառուցապատողի հայեցողությամբ:

(18.3-րդ կետը լրաց. 12.04.12 N 521-Ն)

18.4. Առաջադրանքի տրամադրման Էլեկտրոնային համակարգի ներդրման ժամանակացույցը՝ ըստ Հայաստանի Հանրապետության համայնքների, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(18.4-րդ կետը լրաց. 12.04.12 N 521-Ն)

19. Սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան առաջադրանքի տրամադրման (լրամշակման) կամ սույն կարգի 20-րդ կետի հիմքերով վերջինիս մերժման ժամկետը չի կարող գերազանցել 20 օրը, բացառությամբ սույն կարգի 19.1-ին կետով սահմանված դեպքերի::

(19-րդ կետը փոփ. 08.08.03 N 992-Ն, խմբ. 29.12.05 N 2405-Ն, փոփ., լրաց. 03.03.11 N 257-Ն)

19.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II կատեգորիայի դասակարգում ունեցող օբյեկտների համար առաջադրանքը տրամադրվում է կառուցապատողի հայտի ընդունման օրվանից 10-օրյա ժամկետում, իսկ III կատեգորիայի օբյեկտների համար՝ 15-օրյա ժամկետում:

(19.1-ին կետը լրաց. 03.03.11 N 257-Ն)

19.2. Էլեկտրոնային համակարգի կիրառման կամ կառուցապատողի ցանկության դեպքում առաջադրանքի տրամադրման կամ սույն կարգի 20-րդ կետի հիմքերով վերջինիս մերժման մասին կառուցապատողը տեղեկացվում է հայտում նշված Էլեկտրոնային հասցեով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նշված հեռախոսահամարի միջոցով:

(19.2-րդ կետը լրաց. 12.04.12 N 521-Ն)

19.3. Էլեկտրոնային համակարգի կիրառման դեպքում սույն կարգի 19.2-րդ կետում նշված տեղեկացմամբ հայտնվում է նաև

կառուցապատողի կողմից ներկայացված տեսաներածված փաստաթղթերի հավաստիությունն ուսումնասիրելու անհրաժեշտության մասին: Տեղեկացումն ստանալուց հետո կառուցապատողը սույն կարգի 18-րդ կետում նշված փաստաթղթերի բնօրինակները ներկայացնում է իրավասու մարմին, որը սույն օրը նշված փաստաթղթերի բնօրինակները դրանց տեսաներածված պատճենների հետ համեմատելուց և վերջիններիս պատշաճ լինելու հանգամանքը հավաստելուց հետո՝ սահմանված կարգով կազմված և իր կողմից կնքված առաջադրանքը (N 2 ձև) ելքագրում և դրա կնիքով հաստատված թղթային տարբերակը տրամադրում է կառուցապատողին:

(19.3-րդ կետը լրաց. 12.04.12 N 521-Ն)

19.4. Սույն կարգի 19.3-րդ կետով սահմանված դեպքերում անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում իրավասու մարմնի կողմից տրված առաջադրանքը չեղյալ է համարվում, ինչի մասին կառուցապատողը տեղեկացվում է գրավոր՝ նշելով սույն կարգի 20-րդ կետով սահմանված հիմքերը: Հայտին կցվող փաստաթղթերի բնօրինակները վերադարձվում են կառուցապատողին: Կետծ տվյալներ ներկայացնելու դեպքում կառուցապատողը կրում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

(19.4-րդ կետը լրաց. 12.04.12 N 521-Ն)

20. Հայտը կարող է մերժվել, եթե՝

ա) կառուցապատողը հայտում ամրագրել է այնպիսի ցուցանիշներ (պայմաններ), որոնք հակասում են տվյալ տարածքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (դրանց առկայության դեպքում), ինչպես նաև քաղաքաշինական, բնապահպանական, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային և այլ նորմատիվ փաստաթղթերի պահանջներին:

բ) ներկայացվող փաստաթղթերի լրակազմը չի համապատասխանում սույն կարգի 18-րդ կետով սահմանված պահանջներին կամ դրանք պարունակում են սխալ կամ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ:

(20-րդ կետը լրաց. 12.04.12 N 521-Ն)

21. Կառուցապատողը կարող է համապատասխան փոփոխություններ կատարել մերժված հայտում ու ներկայացվող փաստաթղթերում և կրկին հայտ ներկայացնել (այդ թվում՝ էլեկտրոնային համակարգի կիրառման միջոցով) իրավասու մարմին:

(21-րդ կետը լրաց. 12.04.12 N 521-Ն)

22. Իրավասու մարմինը քննարկում է կրկնակի հայտը և 10 օրվա ընթացքում կառուցապատողին տալիս առաջադրանք:

(22-րդ կետը փոփ. 08.08.03 N 992-Ն)

22.1. Սույն կարգով սահմանված ժամկետները հաշվարկվում են աշխատանքային օրերով:

(22.1-ին կետը լրաց. 03.03.11 N 257-Ն)

23. Հայտի մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

**Հավելված N 1
Ճարտարապետահատակագծային
առաջադրանք տալու կարգի**

Ձև N 1

Հայաստանի Հանրապետության համայնքի ղեկավար

(իրավասու մարմինը, ղեկավարի անունը, ազգանունը)

Կառուցապատող _____

(իրավաբանական անձի անվանումը,

ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Հ Ա Յ Տ

Խնդրում եմ տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք _____

(կառուցում, վերակառուցում, կապիտալ նորոգում, ամրակայում, վերականգնում, գործառական նշանակության փոփոխում և այլն,
օբյեկտի անվանումը, հակիրճ բնորոշումը, հզորությունը)

նախագծման համար _____

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը,
հասցեում գտնվող հողամասում:

հողամասի ծածկագիրը)

Նախատեսում եմ _____

(օբյեկտի նախատեսվող պարամետրերը և գործառական նշանակությունը՝
_____:

այդ թվում՝ փոփոխվող)

Կից ներկայացնում եմ՝

ա) կառուցապատվող հողամասի հատակագիծը՝ նախագծվող օբյեկտի առաջարկվող տեղանշմամբ,
իսկ կառույցի գործառական նշանակության փոփոխության դեպքում՝ նաև վերջինիս
հատակագիծը (հատակագծերը).

բ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ օգտագործողի՝ անշարժ գույքը փոփոխելու
իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը:

Կառուցապատող _____

(ստորագրությունը) _____
(անունը, ազգանունը)

_____ 200 թ.

Կ. Տ.

(իրավաբանական անձի համար):

(հավելվածը խմբ. 29.12.05 N 2405-Ն, փոփ. 09.04.09 N 354-Ն, լրաց. 03.03.11 N 257-Ն, լրաց. փոփ. 12.04.12 N 521-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուդյան

Հավելված N 2
Ճարտարապետահատակագծային
առաջադրանք տալու կարգի

Ձև N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

_____ մարզ
_____ համայնք

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ N ____

_____ 200 թ.

Օբյեկտ _____
(կառուցում, վերակառուցում, ուժեղացում, կապիտալ նորոգում, ամրակայում, վերականգնում, և այլն, օբյեկտի անվանումը, հակիրճ բնորոշումը, հզորությունը,
ռիսկայնության աստիճանը (կատեգորիան))
_____ նախագծային փաստաթղթերի մշակման համար
(նախագծման փուլերը)

Հասցեն _____

Կառուցապատող _____
(կազմակերպության անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը

(կառուցապատման նպատակով Հայաստանի
Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ
գույքի փոփոխման, քաղաքաշինական այլ գործունեության հետ առնչվող անհրաժեշտ
փաստաթղթերը)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա)

3. Հողամասի առկա վիճակը

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ
(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ)
պատմամշակութային հուշարձանների տարածքներ
(պահպանական գոտիներ)

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների

նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

(ելնելով Հայաստանի Հանրապետության
օրենսդրության և նորմատիվատեխնիկական
փաստաթղթերի պահանջներից,
առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի
դրույթներից
կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված
(կազմա վորվող) քաղաքաշինական միջավայրի
պայմաններից)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից)
(մետր)

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների)
ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ)
տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի
հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

9.7. այլ պահանջներ

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ
տեղափոխման պայմանները և աշխատանքների հերթականությունը

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների
օգտագործման պայմանները

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

Կցվում է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում

Կցվում է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

Կցվում է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

Կցվում է

(համաձայն կարգի 4.7-րդ կետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

12.6. աղբահանություն

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր,

	ցանկապատում, գովազդ և այլն)
15. Շինարարական նյութեր	(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)
16. Պաշտպանական կառույցներ	(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)
17. Հակահրդեհային պահանջներ	(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)
18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ	
19. Շրջակա միջավայրի պահպանում	(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)
20. Շինարարության կազմակերպում	(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)
21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը՝ ՀՀ կառավարության 1998 թ. դեկտեմբերի 12-ի N 812 որոշման N 1 հավելվածի 6-րդ կետին համապատասխան)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ	
--	--

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

(Իրավասու մարմնի հետ կամ քաղաքաշինական խորհրդում նախագծային նյութերի նախնական համաձայնեցում)

24. Հասարակական քննարկումներ

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումներ

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև կարգի 4.8-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ.

(հավելվածը խմբ. 29.12.05 N 2405-Ն, փոփ. 09.04.09 N 354-Ն, 06.11.09 N 1265-Ն, լրաց., փոփ. 03.03.11 N 257-Ն, 12.04.12 N 521-Ն, լրաց., խմբ. 02.05.13 N 522-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան